ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Լույս է տեսնում 2005թ. դեկտեմբերի 25-ից

2 (158) փետրվար 2019

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՀՅՈՒՐԵՐԸ

ՀՀ Ճապոնիայի Արտակարգ և լիազոր Դեսպան Ն. Գ. Ջուն Յամադան, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատար Սոնա Հովհաննիսյան

Փետրվարի 22-ին ԵՊԿ-ի հյուրն էր ՀՀ Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. Պարոն Ջուն Յամադան: Հանդիպման ընթացքում քննարկվեցին կրթական և մշակութային համագործակցության հետագա զարգացման ուղիները: Պարոն Ջուն Յամադան ներկա գտնվեց համերգին, որի ընթացքում կատարվեցին հայ և ճապոնացի կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Անդրանիկ Արզումանյան, Օլգա Լիկովա, Սոնա Հովհաննիսյան, Վարվառա Հովհաննիսյան, Արկադի Ավանեսով

Փետրվարի 11-ին Երևանի Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատար Սոնա Հովհաննիսյանը հյուրընկալեց Երևանում Ռուսաստանի մշակույթի և գիտության կենտրոնի մշակութային և հասարակական բաժնի ղեկավար Անդրանիկ Արզումանյանին և կրթության և ռուսաց լեզվի բաժնի ղեկավար Օլգա Լիկովային: Հյուրերը կոնսերվատորիայի գրադարանին նվիրեցին մասնագիտական երաժշտական գրականություն: Հանդիպման ընթացքում քննարկվեցին մարտ ամսին կայանալիք ռուս երաժշտության 1-ին միջազգային դաշնամուրային մրցույթի անցկացման և կազմակերպման հարցերը, ինչպես նաև հետագա համագործակցության և համատեղ նախագծերի իրականացման հեռանկարները:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ 27 ՏԱՐԵԿԱՆ Է

Միզոյառում Լոռու մարզի Հագվի գյուղում

Հագվիի միջնակարգ դպրոցի միջոցառումը նվիրված Հայոց բանակի 27-րդ տարդարձին, դպրոցի դահլիճում

Տարիներ շարունակ Հայոց բանակը եղել է ու մնում է հայ ժողովրդի անխափան պարիսպը: Շատ անգամներ են փորձել կոտրել ու անցնել դրա սահմանները. ցանկացել են տիրանալ ամենին, ինչը որ մեզ է պատկանում, փորձել են ավերել, ինչպես մեր «Անին» սակայն չի ստացվել բնաջնջել մեզ: Ինչպես գիտենք այդ ավերումից հետո կանգուն մնացին «Անիի» սյուները և միշտ այդպես կանգուն մնաց Հայոց բանակը:

7

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ-ՈՒՄ

Անուշ Կիրակոսյանի ղեկավարությամբ «Նոր սերունդ» խումբ, Տ. Ունծագ Ալբանի Ս. Համբարձման եկեղեցի, կոմցերտմայստեր՝ Լուսինե Կարապետյան

Երեսուն տարի առաջ աշխարհի բազմաթիվ բարեգործական միությունների թվին ավելացավ ևս մեկը, որը կարծես չէր տարբերվելու մյուսներից, քանզի բոլորի անելիքն էլ բարեգործությունն է: Սակայն խնդիրն ու կարևորությունը նորաստեղծ միության համար այնքան դրամական օգնության մեջ չէր, որքան նրա ուղղվածության ու նպատակի:

3

«ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ» 15-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի ռեժիսորի ասիստենտ՝ Վիկտորյա Փոշոտյան, ժուռնալիստ, արևելագետ, դասախոս, կոմիտասագետ, երգիչ Տիրան Լօքմագյոզյան, բժշկուհի Մարինե Գևորգյան, քանոնահար, ժուռնալիստ՝ Անուշ Կիրակոսյան, ժասմեն Ասրյան (ՀՀ հանրային խորհրդի ենթախմբի նախագահ), ԵՊՄՀ պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր՝ Յուրի Յուզբաշյան, կիթառահար, պրոֆեսոր Նունե Պողոսյան, ռեկտորի պաշտոնակատար՝ Սոնա Հովհաննիսյան, դոցենտ, արվեստագիտության թեկնածու կատարողական արվեստի պատմության, տեսության և մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լիլիթ Եփրեմյան, Երևան, 28 հունվարի 2019 թ.

Ավանդաբար «Ակումբ» Թումանյան՝ 40-ում նրանց հետ համատեղ և ԵՊԿ հրատարակչության հիմնադիր և գլխավոր խմբագիր Գ. Կ. Շագոյանի նախաձեռնությամբ տեղի են ունենում շնորհանդեսներ առնվազն տարին երկու անգամ՝ հունվարի 28-ին և ապրիլի 24-ին նվիրված նախ Հայոց բանակի օրվան և նաև «ԵՊԿ հրատարակչության» հիմնադման և այս տարի 15-ամյա տարեդարձին: Միակ պետական նոտային հրատարակչությունը հանրապետությունում հիմնադրվել է ԵՊԿ-ում որպես բաժին: Ներկա էին երևելի հյուրեր և ռեկտորի պաշտոնակատար, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանը, որը ԵՊԿ ռեկտորներից առաջինն էր, որ իր ներկայությամբ ողջունեց միջոցառումը հուրախություն աշխատակազմին: Նույնպես առաջին անգամ ներկա էին նորանշանակ գիտության գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը, ԵՊԿ գիտական խորհրդի գիտքարտուղար արվեստագիտության թեկնածու, դոցենտ Օլյա Նուրիջանյանը, նաև ռեկտորի խորհրդական՝ և ՀԵԸ նախագահ, պրոֆեսոր՝ Դավիթ Ղազարյանը, ով նաև հեղինակներից է, նորանշանակ ամբիոնի վարիչներ (տե՛ս՝ նկարներում):

2

“КОНЦЕРТМЕЙСТЕРЫ АРМЕНИИ”

Саеник Магакян

Так называется книга доцента Ереванской консерватории, пианистки Саеник Магакян, вышедшая в Ереване в издательстве "Лусакн".

Знакомство с этой книгой начинается с приятной неожиданности: радуют два небольших, но емких вступительных слова – народной артистки РА Светланы Навасардян и профессора Ереванской консерватории Шушаник Бабаян, звучащие культурно, грамотно и дающие ясное представление о содержании книги, ее значении для армянской музыкальной культуры.

4

«ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ» 15-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Արվեստագիտության դոկտոր, ԵՊՄՀ-ի պրոֆեսոր Յուրի Յուզբաշյան, ԵՊԿ գիտության գծով պրոռեկտորի պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Ծովինար Մովսիսյան, ԵՊԿ ռեկտորի պաշտոնակատար, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյան

ՀԵԸ նախագահ, պրոֆեսոր, ԵՊԿ ռեկտորի խորհրդական պրոֆեսոր Դավիթ Ղազարյան, ընդհանուր դաշնամուրի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ Սվետլանա Դավթյան, գրող, թարգմանիչ, բանաստեղծուհի Կարինե Խալատովա, երգեհոնահար, դոցենտ՝ Աննա Բակունց, ԵՊԿ գիտխորհրդի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու՝ Օլգա Նուրիջանյան, Չարենցի անվ. ԳԱԹ բաժնի վարիչ, երաժշտագետ Մարինա Մուշեղյան

Պրոֆեսոր, կիթառահար Նունե Պողոսյանը ներկայացնում է իր հրատարակումները

Հրատարակչության անցած ուղին և գործունեությունը ներկայացրեց երաժշտագետ, հրատարակիչ՝ Գոհար Շագոյանը: Հրատարակչության, նաև 1998-ից հիմնադրած «Երաժշտական Հայաստան» ամսագրի շնորհանդեսներին ներկա են եղել անվանի կոմպոզիտորներ, նույնիսկ իրենց ընտանիքներով, ամբիոններ իրենց ամբողջական կազմերով, պրոռեկտորներ՝ Հենրիկ Սմբատյանը, ով բարձր էր գնահատում խմբագրական գործը լինելով նաև հիանալի խմբագիր թե՛ ռուսերեն, և թե՛ հայերեն լեզուների, Ռուբեն Տերտերյանը, որը նաև հեղինակ է պատկերազարդ ալբոմ գրքի, որը վերահրատարակվեց հետագայում՝ ՌԴ-ում առանց պատկերազարդումների, անգլերեն լեզվով՝ ԱՄՆ-ում: Նախկին ռեկտոր՝ Շահեն Շահինյանը ներկա է գտնվել Մեդեա Աբրահամյանի ծննդյան 85-ամյակին Գ. Շագոյանի կազմակերպած մեծարման հանդիպում-համերգին: Սակայն այնպես է ստացվել, որ հրատարակչության շնորհանդեսներին առաջին անգամ ներկա գտնվեց ռեկտորը՝ Սոնա Հովհաննսիյանը և իր խոսքը, բացի ողջույնից նաև գործնական էր, որն առավել ոգևորիչ էր:

Արվեստագիտության դոկտոր, ԵՊՄՀ-ի պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, ով 21 տարի է արդեն (ամսագրի՝ «Երաժշտական Հայաստանի» ստեղծման տարիքն է), որ հրատարակչության և ԵՊԿ մամուլի լավագույն բարեկամներից է, ով ուշի ուշով հետևում է նրա զարգացմանը: Իր խոսքում նշեց. որ 10-ամյակի առիթով ասված միտքն է շարունակում, որ նշել էր պատանի հասակ էր և հիմա էլ հասունացման 15 ամյակն է հրատարակչության, որ առավել պատասխանատվությամբ պետք է գործել և հարազատ լինել երաժշտական արվեստին և երաժշտագիտական մտքին:

Ելույթներ ունեցան և նաև շնորհանդեսը տեղի ունեցավ հատկապես նշանակություն տալով դասագրքերի հրատարակմանը (այս տարիների ընթացքում 5 դասագիրք է հրատարակվել): Հրավիրվել էր պրոֆեսոր Նունե Պողոսյանը՝ ներկայացնելու իր հեղինակած ակուստիկ կիթառի դասագիրքը, նաև նոտային ժողովածուն՝ նվիրված էդուարդ Բադալյանի արվեստին: Եվ կարծում ենք հրատարկությունների գործընթացը, որը վերջին տարիներին գրեթե ընդհատվել էր, առավել եռանդուն կդառնա:

«ԵՊԿ հրատարակչության» համագործակցությունը Սփյուռքի հետ հարատև է և պատահական չէր, որ 3-րդ ստվար և նշանակալից աշխատությունը Գրիգոր Փիտէճեանի հեղինակությամբ, այն է՝ «Քրիստափոր Կարա-Մուրզայի կյանքը և ստեղծագործությունը», դրվեց երաժիշտներիս սեղանին Մակար Եկմալյանի, Կոմիտասի հատորյակների կողքին: Պարոն Փիտեճեանի շնորհավորանքները տեսագրությամբ ուղարկվել են, իսկ ստորև ներկայացնում ենք ԵՊԿ շրջանավարտ, երաժշտագետ, ամերիկաբնակ Սիրանուշ Հակոբյանի շնորհավորական ուղերձը.

Ձերմագին շնորհավորանքներ «ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ» 15-ամյակի կապակցությամբ: 15 տարի... Թվում է, թե երկար ժամկետ է, լիարժեք հիմնավորվելու ու արժեքներ ստեղծելու համար: Այնուամենայնիվ, եթե փոքրիշատէ գիտակ ես նմանատիպ նախաձեռնություն ստեղծելու անթիվ ու անհամար դժվարություններին, պիտի որ հստակ լինի պատկերն այն խրթին ճանապարհի, որ հաղթահարել ու այսօր էլ անտրտունջ շարունակում են հարթել հրատարակչության ստեղծագործ աշխատակիցներն իրենց գործին անմնացորդ նվիրված ղեկավարի՝ Գոհար Շագոյանի հետ միասին: Ուրեմն, թող որ այսուհետ այս հրաշալի աշխատակազմը գնահատվի ըստ արժանվույն, քաջալերվի իրապես արժեքավոր աշխատանքի համար, ունենա այնքան անհրաժեշտ օժանդակությունը մեր բոլորի կողմից, քանի որ հրատարակչությունն է, որ մեր ազգի մշակութային կյանքի, հիշարժան նվաճումների պատմագիրն է: Փառք ու պատիվ ձեզ, որ ձեր անխոնջ աշխատանքի շնորհիվ գալիք սերունդներն անգին գանձ կժառանգեն: Այո՛, հրատարակված յուրաքանչյուր ամսագիրը մի գանձ է, որ համալրում է մեր երկրի պատմության փաստագրությունը: Ստեղծագործ ու սլացիկ միտք, կորով ու ավյուն, ինչպես նաեւ, նորանոր ու ցնցող նվաճումներ եմ մաղթում հրատարակչության աշխատակազմին:

Ձեր երկրպագուն՝ Սիրանուշ Հակոբյան

«ԵՊԿ հրատարակչությունը» ընդլայնում է բարեկամների շրջանակը և Հայրենիքում և արտերկրացիների հետ: Վերջին տարիներին երիտասարդացել է հոդվածագրերի երաժշտական արվեստով գիտականորեն հետաքրքրվողների տարիքը: Դա արդյունքն է երաժշտական մամուլի ստեղծման և այնպիսի պատկառելի խմբագիրների առկայությամբ, ովքեր գործել և գործում են «ԵՊԿ հրատարակչությունում», որտեղ հրատարակվել են նոտային ժողովածուների, գրքերի պատկառելի քանակ (մոտ 80 անուն) և ունեինք բաժնի վարիչ (2004-2014 թթ.) և «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար (2000-2018 թթ.) երջանկահիշատակ Վալենտին Թովմասյանը, հանրապետությունում և Սփյուռքում ճանաչված մտավորական խմբագիր, սրբագրիչ (2004-ին, թոշակավորվել՝ 2017-ին) ով նաև ՀՀ ռադիոլրագրության կես դարյա բաժնի վարիչ Հովհաննես Մուրադյանը, որին շնորհավորում ենք «ԵՊԿ հրատարակչության» 15-ամյակի առթիվ: 2000-ից ռուսերեն լեզվով տեքստերի պատասխանատուն է Սոֆա Ազնաուրյանը, ով նաև ճանաչված կոմպոզիտոր է: Հրատարակչության հիմքը՝ ծրագրավորողների և դիզայներների աշխատանքն է, Կոնսերվատորիայինը՝ հիմնադրել է սիրիահայ վառ մասնագետ Քրիստափոր Փախանյանը, որն այժմ գործում է արտերկրում: Նրանից հետո աշխատանքը շարունակել են Հարություն Երիջանյանը (նաև դաշնակահար, այժմ՝ SS ինժեներ), Նունե Սամվելյանը (կիբեռնետիկ), այժմ՝ գեղարվեստական խմբագիրն է Գոհար Հովհաննիսյանը:

«Երաժիշտ» ամսաթերթը ներկայացնում է գլխավոր խմբագիր՝ Արմինե Աթոյանը՝ ՀՀ ԳԱԱ ԱԻ հայցորդ է, նաև ուսուցիչ, Արմավիրի արվեստի պետական քոլեջի դասախոս, որի շնորհիվ ապահովում է կապը մարզերի երաժշտական կրթության և երաժշտական կյանքի հետ, նաև երգչախմբի արտիստ է: Նա նշեց, որ ամսաթերթն այսուհետ գտնվելու է ԵՊԿ կայքում *http://www. conservatory.am/tert/N157_hunvar.pdf* ցանկացողները կարող են ընթերցել և արդեն 800-ից ավելի ընթերցող ունի և անընդհատ ավելանում են հետաքրքվողները և իհարկե գունավոր գեղեցիկ նկարներով հարստացած: Նա կոչ արեց, և հետևողական է, որպեսզի ներգարվվեն առավել շատ ուսանողներ՝ գրչագիրը դառնալու ԵՊԿ պաշտոնական մամուլին: Հրատարակչության շնորհանդեսներում ներկայացվում են նաև արվեստագետների նկարահանած վավերագրական փաստագրական ֆիլմեր: Անցած 15 տարիների ընթացքում ցուցադրվել են գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանի երեք, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Մելքոնյանի «Արարատ», Գ. Շագոյանի «Ապիլի 24», ռեժիսորներ՝ Կարեն Ծատուրյանի, Գագիկ Հարությունյանի, Մովսես Գասպարյանի ֆիլմերը: Ներկա էին նախաձեռնող՝ Գ. Հարությունյանը, Մ. Գասպարյանի նկարահանած վերագրական-փաստագրություն՝ «Անցյալն է որոշում ապագան» ֆիլմի հերոսները՝ Տիրան Լօքմագյոզյանը, Մարինե Մուշեղյանը:

Է. Բադալյան՝ «Ժողովրդական պար», կատարող՝ Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ 11-րդ դասարանի աշակերտ՝ Վահան Սարգսյան

պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր, «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ՝ Սվետլանա Սարգսյան

Արմինե Աթոյան, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր



Հյուրեր, հեղինակներ Արմինե Սեյրանյան (երգչուհի, պրոֆեսոր), ԵՊԿ հրատ. անգլերեն լեզվի խմբագիր Զեմմա Գասպարյան (թարգմանիչ), Կարեն Աստաբաշյան (ԱԱԾ նվագախմբի արտիստ), տնտեսագետ Հեղինե Հախնազարյան, Դանիել Երաժիշտ, Արմինե Հարությունյան (դաշնակահար), Մայա Աֆրիկյան (երգչուհի), Նարինե Զարիֆյան (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ջազէստրադային ամբիոնի վարիչի պաշտոնակատար), Մարինե Գևորգյան (դաշնակահարուհի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն) Սարինա Ավքանդիլյան (խմբավար, պրոֆեսոր), Անուշ Խաչատրյան (դոցենտ, ջութակահար, Աճեմյանի անվ. ՄԵԴ տնօրեն՝), Կարինե Շագոյան (ինժեներ-տեխնոլոգ), Մարինե Գևորգյան (բժշկուհի)

Երաժշտագետ, ԳԱԹ-ի գիտաշխատող՝ Մարինե Մուշեղյան

Ա. Բաբաջանյանի երաժշտամանկավարժական քոլեջի 3-րդ կուրսի ուսանող Վահե Գևորգյան, նույն քոլեջի դասախոս, երաժշտագետ՝ Հռիփսիմե Մկրտչյան, երաժշտագետ, ասպիրանտ Արմենուհի Բաբլոյան, օպերային ռեժիսոր Վիկտորյա Փոշոտյան, գրող, թարգմանիչ, ժուռնալիստ Կարինե Խալատովա

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՄՆ-ՈՒՄ

1 Նախախոսքս վերաբերում է 1990 թվականներին ստեղծված «Ամարաս Արտ Ալյանս» բարեգործական միությանը, որի հիմնադիրները պատվարժան կանայք էին, ովքեր ապրելով Հայրենիքից հեռու չկարողացան անտարբեր մնալ նրա ճակատագրի և լինելիության հարցին: Այնքան պատվախնդիր էին նրանք, որ սկզբում նախանշված «Արմենիան Արտ Ալյանս» անունը փոխարինվեց վերը նշված անվան հետ, որը շեշտադրում էր Հայաստան-Արցախ-Սփյուռք ամբաժանելի եռամիությունը: Նպատակասլացությունը նրանց հուշեց, որ երաժշտական ուղղվածությունը տեղին կլինի այն իմաստով, որ մարդկանց մտերմացնող ամենահարմար գործոնը երաժշտությունն է: 1990 թ. հրավիրվեցին ջազային անսամբլներ: Թվով երեսունվեց երաժիշտ մեկ համերգի ընթացքում բեմ բարձրացան հիացնելով հետաքրքրված հանդիսատեսին: Այնուհետև ծրագրերն ընդլայնվեցին և բաժանվեցին ժանրերի: Հիմնվեց «Հովհաննես Բադալյան երաժշտական ֆոնդ» ծրագիրը: Սա «Ամարաս Արտ Ալյանս» բարեգործական միության բազմաթիվ ծրագրերից մեկն էր, որի շրջանակներում Բոստոնի դպրոցական երգչախմբերը երկու տարի անընդմեջ եկան Հայաստան: Այս այցերը համընկան Հայոց Մեծ Եղեռնի տարելիցին: Իսկ դրան հաջորդող ծրագրով կազմակերպվեցին ամառային ճամբարներ փոքրիկների համար, ուր երեխաները ներկայանում էին իրենց երաժշտական ու նկարչական ընդունակություններով:

Ք. Ալբանի մանկապարտեզի սաները «Նոր սերունդ» խմբի հետ

«Ամարաս Արտ Ալյանս» բարեգործական միություն, Բոստոն
Պաուլ Խալարյան, Արտեմիս Մինասյան, Կարեն Քոչարյան, Թամար Մելքոնյան
Ժանետ Խալարյան, Անի Չեքիջյան, Արաքս Բադալյան (նախագահ), Ալիտա Ամարյան,
Լևոն Գուլգասյան, Ալվարդ Բադալյան, Լենա Ալթունյան, Մարալ Տեր-Թորոսյան, Փեգի
Հովհաննիսյան, Ռուբինա Վարժապետյան, Աննա Նազարյան
(բացակայում են՝ Անի Առաքելյանը և Թաթուլ Բադալյանը)

Բարեգործական ծրագիրը «Հակոբ Կարապենց» անվամբ տարբերվեց նախորդներից և վերաբերում էր միայն գրականությանը: Ուսանողության շրջանում նախօրոք հայտարարված մրցույթի տասը հաղթողները խրախուսվեցին դրամական մրցանակով:

2018 թ. իրագործվելիք հերթական ձեռնարկը «Նոր սերունդ» անունն էր կրում: Սրա գաղափարը զուտ ազգային երաժշտարվեստի պրոպագանդումն էր: «Ամարաս Արտ Ալյանս» բարեգործական միության անդամները այս անգամ որոշեցին ԱՄՆ հրավիրել ազգային գործիքների տիրապետող յոթը պատանիների: Ծրագիրը շարունակական պիտի լիներ և ամեն անգամ նախորդներին կփոխարինեին ուրիշները: Դրանով շատ թվով պատանիների ներգրավվման շնորհիվ լայնանալու էր նաև ծրագրի շրջանակները:

Մեկ տարվա երկուստեք քրտնաջան աշխատանքից հետո 2018 թվականի հոկտեմբերին իրականություն դարձավ «Նոր սերունդ» ծրագիրը: Մինչ այդ, տարվա սկզբին Երևանում ընտրված պատանիների ու աղջիկների յոթ հոգուց բաղկացած խումբը երկու բաժին համերգային ծրագրով պետք է հանդես գար ամերիկահայ հասարակության շրջանակներում, պրոպագանդելով հայ ազգային երաժշտարվեստը: Հեշտ խնդիր չէր դրված արդեն իսկ ստեղծված անսամբլի երաժշտական մասի ղեկավար, քանոնահարուհի Անուշ Կիրակոսյանի առջև: Տողերիս հեղինակը զգալով գործի դժվարությունները և ժամանակի սղությունը ամիջապես լծվեց ծրագրի որոնողական աշխատանքներին, միաժամանակ սկսվեցին պարապմունքները: Ուսումնական թոհուբոհի հետ միասին օգտագործելով նաև ամառային արձակուրդների ամբողջ ընթացքը, երեխաների հետ միասին աշխատանքային խիստ գրաֆիկի պայմաններում պարտաստվեց ակընկալիք հետաքրքիր ու բարդ ծրագիրը:

Երկու բաժին ակընկալող ծրագիրը մոտ քսանչորս ստեղծագործություն բառացիորեն կազմվեց հայկական ժողովրդական երգերի, հայ կոմպոզիտորների, գուսանական և հայրենասիրական երգերի հիման վրա. Կոմիտաս «Ալ այլուղս», Ա. Խաչատրյան «Լեզգինկա», Խ. Ավետիսյան «Մախմուր աղջիկ», Ռ. Պետրոսյան «Ֆանտազիա», Ծ. Համբարձումյան «Ծամերով պար», Կ. Պետրոսյան «Հայաստան», Կոմիտաս «Վաղարշապատի պար» և այլն:

«Նոր սերունդ» ծրագրի նպատակներն իրականացան: Երևանից ժամանած պատանիների համերգային շրջագայությունը ԱՄՆ-ում հաջողությամբ պսակվեց, իսկ դրա սահմաններն ընդգրկում էին Հարթֆորդ, Թրամբալ (Կոնեկտիկուտ նահանգ), Նյու Յորք, Օլբանի, Բեյսայդ (Նյու-Յորք նահանգ), Բոստոն, Հեյվրհիլլ, Ուորսեսթեր (Մասաչուսեցս նահանգ), Պրովիդենս (Ռոդ Այլենդ նահանգ) քաղաքները:

Խմբի գործիքային մասի ղեկավար և դիրիժոր Անուշ Կիրակոսյանի ջանադրությամբ պատանի երաժիշտներն իրենց յուրաքանչյուր բեմելով հայկական երաժշտության հույզերն ու քնքշանքն էին փոխանցում ամերիկահայությանը, ովքեր հոգու ծարավ ունեին: Իսկ այդ կատարումներին յուրահատուկ շունչ էր տալիս նաև դանաշկահարուհի Լուսինե Կարապետյանն իր փայլուն նվագակցությամբ: Որտեղ էլ խումբը ելույթ էր ունենում, սիրո ու բարեկամության կամուրջ էր կամարվում բեմի ու հանդիսատեսի միջև: Այս ամենի լիարժեք ու արժանի գնահատականը հանդիսատեսի երկարատև ծափահարություններն էին և յուրաքանչյուր համերգից հետո հիացմունքի ու գնահատանքի այն խոսքերը, որոնք ասվում էին ելույթների մասին:

«Ամարաս Արտ Ալյանսն» այնքան լավ էր աշխատել, որ նյույորքյան համերգին որպես պատվավոր հյուր ներկա էր ՄԱԿ-ի գրասենյակի հայաստանյան դեսպան Միեր Մարգարյանը: Նա համերգի ավարտին իր շնորհակալական ու հիացական խոսքում նշեց, որ «Նոր սերունդ» ծրագրի շրջանակներում տեղի ունեցող համերգները, որոնք աչքի էին ընկնում իրենց բարձր մակարդակով և անցնում են սիրո ու ջերմության մթնոլորտում, ամրացնում են մեր ազգի միասնականությունը, օրինակ են դառնում ու ճանապարհ հարթում ապագայի համար:

Նյույորքյան համերգի հաջորդ օրը պատանի երաժիշտները գեղեցիկ համերգների, հիշարժան հանդիպումների ու հյուրասիրությունների լավագույն հիշողություններով վերադարձան Հայրենիք: Նրանց մանկական հիշողության մեջ ընդմիշտ դրոշմվեց հարգարժան տիկնանց՝ Արաքսի, Մարալի, Անիի, Արտեմիսի, Փեգի, Ժանետի, Լենայի, Թամարի հոգատարությունը, ուշադրությունն ու ջերմ վերաբերմունքը: Յուրաքանչյուր հրաժեշտ մի նոր հանդիպման ակընկալիք է և հայկական ազգային երաժշտության հետ կրկին շփվելու մեծ ցանկություն:

«Նոր սերունդ» ձեռնարկը «Ամարաս Արտ Ալյանս» միության հավաստիացումն էր այն մասին, որ նա իր գոյության երեսուն տարիների ընթացքում հավատարիմ է մնացել իր նպատակներին, այն է. անշահախնդիր բարեգործությունն ի շահ Հայրենիքի ու հայ երաժշտարվեստի: Հարկ է նշել, որ միությունը գրանցված է դաշնակցային պետությունում:

Հպարտորեն պիտի ասել, որ «Ամարաս Արտ Ալյանս» միության անդամ մեծարգո տիկիններ՝ Անի Չեքիջյանի, Մարալ Տեր Թորոսյանի, Արտեմիս Մինասյանի, Թամար Մելքոնյանի, Անի Առաքելյանի, Փեգի Հովհաննեսյանի և նախագահ՝ Արաքս Բադալյանի նվիրված աշխատանքի ու փորձառության շնորհիվ միությունը մեծ ճանաչում ու բարի համբավ ունի ԱՄՆ-ում: Ավարտված ամեն մի ծրագիր նորի սկիզբ է: Սա կնշանակի արդեն որոշված է, որ այս տարվա՝ 2019 թվականի բոլոր ձեռնարկները նոր ուղղվածություն կունենան, դրանք նվիրված կլինեն մեծանուն Կոմիտասի անվան հետ:

Բարի երթ քեզ «Ամարաս Արտ Ալյանս», քանզի քո առաքելությունը բարեգործությունն է, իսկ ցանկությունը Հայրենիքի բարգավաճումը:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Մենակատար քանոնահարուհի,
ժուռնալիստ, ուսուցչուհի

«ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ» 15-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

2 Նրանք ներկայացրեցին այն աշխատանքն ու հաջողություններ, որոնք ձեռք են բերել վերջին և Կարինե Բրուտյանի հետ «Գութաներգ» ֆիլմերի ցուցադրություններից, այսինքն հանրայնացումից: Առանձնահատուկ պետք է նշել որ, կոսերվատորիայի և ոչ միայն, այն հեղինակներն ու մասնակիցները, ովքեր առնչվել են, բոլորը շատ սիրով և ստեղծագործական համագործակցությամբ են կապված «ԵՊԿ հրատարակչության» հետ: Եվ պատահական չէր, որ ֆիլմի մասնակիցները, քանի որ բարձրացված էին հեղինակային պատկանելության, պատմական ճշտգրտումների՝ հատկապես Կոմիտասի դիպլոմային աշխատանքի վերաբերյալ, իսկ «Գութաներգում»՝ երգչախմբային արվեստի, համատեղ գործելու, միաբան ու մշակութային նպատակներին հետամուտ լինելու հարցերը, խմբավարի բարձր կոչումին հավատարիմ հայ անվանի խմբավարների՝ Հովհաննես Չեքիջյանի, Ռոբերտ Մլքեյանի, Սոնա Հովհաննիսյանի, Հարություն Թոփիկյանի և այլոց մտքերին ծանոթանալու հնարավորություն էր տվել ֆիլմը: Մնալով հավատարիմ ավանդույթներին այդ օրվա ցուցադրությունը կոմպոզիտորական բաժնի մագիստրոսական 1-ին կուրսի ուսանողուհի Հերմինե Հարությունյանի հեղինակած «Դիսոնանս» ֆիլմն էր, որն արժանացել է Բուն TV-ի՝ «դոկուբուն» վավերագրական ֆիլմերի հայտարարած մրցույթում 13 հաղթողներից մեկը:

Ա. Աթոյան, Արմանուշ Հակոբյան (դոցենտ), Մ. Գևորգյան, Ն. Զարիֆյան,
Գ. Շագոյան, Մ. Մուշեղյան, Կ. Շագոյան

Մինչև օրս շնորհավորանքներ է ստանում հրատարակչությունը հեղինակներից, պրոֆեսորադասախոսական կազմից, տարբեր կազմակերպությունների ղեկավարներից և անհատներից, սփյուռքից, օտար հեղինակներից, որի համար շնորհակալություն ենք հայտնում մեր բարի կամեցողներին: «Երաժիշտ» ամսաթերթի էջերում անպայման կհրատարակենք, քանի որ այդ բարեմաղթանքները վերաբերում են նաև հեղինակներին, որոնք համագործակցել ու շարունակում են պատվախնդրորեն կրել ԵՊԿ գրիֆի ներքո հրատարկվելու երջանկությունն այն, որ երազում էին մեր մեծերը. Մարգարիտ Բրուտյանի խոսքերն ու երազանքն էր, որ փառք տիրոջը նա իր հոդվածների լույս ընծայումը տեսավ ու իրեն երջանիկներից մեկն էր համարում: Բոլոր ժամանակների ամբողջ աշխատակազմով երջանիկ ենք, որ մեր երևելի դասախոսներին երջանիկ ականատեսը դարձրեցինք:

ԵՊԿ մագիստրոսականի 1-ին կուրսի
ուսանողուհի, կոմպոզիտոր՝
Հերմինե Հարությունյան

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
«ԵՊԿ հրատրակչության» հիմնադիր վարիչ

"КОНЦЕРТМЕЙСТЕРЫ АРМЕНИИ"

Как справедливо отмечает Ш. Бабаян, профессия пианиста–концертмейстера, неразрывно связанная с различными музыкальными специальностями, с неисчерпаемым богатством инструментальной, вокальной, оперной музыки, необычайно широка и требует глубокой музыкальной культуры. *"Тем не менее фигура аккомпаниатора остается в тени, нередко встречается и пренебрежительное отношение к данной профессии",* – подчеркивает она.

Тема рецензируемой книги – беспрецедентна. Издание такого рода – первый случай в армянской, и не только армянской музыкальной культуре, первая попытка систематизации интереснейшего материала. Эта довольно емкая книга, прекрасно изданная (авторское издание), позволяет проследить – ни много ни мало – вековую историю зарождения и развития концертмейстерского искусства в Армении. В историческом очерке и главах о ведущих армянских пианистах–концертмейстерах республики и о композиторах–исполнителях в новом ракурсе предстают страницы армянской исполнительской культуры.

Этот капитальный трудпотребовал от автора кропотливейшей исследовательской работы. Труд этот действительно огромен и вызывает чувство благодарности. И что интересно? Идея издания подобной книги принадлежит профессору Ереванской консерватории Армену Будагяну, этому истинному подвижнику армянской музыкальной культуры, издавшему десятки книг о ее деятелях, вернувшему из забытья множество уникальных имен. Своей идеей Будагян вдохновил Саеник Магакян, увидев именно в ней будущего автора, способного достойно представить вершинные явления концертмейстерского искусства Армении. И она блестяще справилась с поставленной задачей.

Искусство отличается от всех сфер духовной интеллектуальной деятельности, в частности, тем, что оно индивидуально по своей природе, что только в нем мы познаем мир глазами, умом, чувствами другого человека. Саеник Магакян постигла это искусство: ценность ее работы заключается в том, что она судит об искусстве концертмейстера не со стороны, а словно бы проникая в тайну их творчества, которую она видит в любви, в стремлении к совершенству в собственном деле. Любовь, в данном случае, как вечная преданность музыке.

Несомненный опыт в качестве концертмейстера, участие в сольных концертах гобоистов, фаготистов, трубачей, валторнистов и вокалистов, в концертах в Ереване и других городах Армении, в Москве, Сочи, напряженная каждодневная работа в Ереванской консерватории на кафедре духовых инструментов – вот тот опыт, который обусловил весомость ее труда. Это замечательная основа для глубинного ощущения профессии, знания ее проблем.

Открывает книгу ее объемный обстоятельный исторический очерк, который придает не только познавательное, но и общественное звучание всей книге. Глава читается на одном дыхании, хотя, уверена, она потребовала немалых усилий – архивных исследований, поисков забытых имен. Повествует она о зарождении концертмейстерского искусства в Армении, о первопроходцах. Из различных биографических подробностей, которых читатель немало найдет в книге, открываются как бы дополнительные пути постижения темы, поэтому Магакян права, придавая этой главе такую свободную форму, которая делает книгу живой и впечатляющей.

Эрудиция автора, вкус и знания, глубина анализа позволяют выделить в безбрежном материале самое существенное, рассмотреть концертмейстерское искусство как одно из ответвлений европейской исполнительской культуры, традиции которой творчески освоены и развиты в Армении на национальной почве.

Со страниц этой главы перед нами предстают имена первых армянских пианистов, начиная от классика армянской оперной музыки, прекрасного пианиста–аккомпаниатора Тиграна Чухаджяна, композитора, этнографа, пианиста–солиста и концертмейстера Никогаеса Тиграняна, выдающегося польского музыканта армянского происхождения, ученика Шопена Кароля Микуля (Карапет Микаелян, 1819–1894 гг.), талантливого армянского пианиста и композитора Стефана Эльмаса, бравшего уроки у самого Ференца Листа, знаменитого фортепианного дуэта сестер Елены и Евгении Адамян, активно участвовавших в концертной жизни европейских стран, блистательной Маргариты Миримановой, которой ректор Санкт–Петербургской консерватории Глазунов доверил исполнение своего Фортепианного концерта в авторском вечере в столице Российской империи, знаменитой Марии Каламкарян, широко известной своими выступлениями в Европе, и которая в течение двух лет была концертмейстером великого русского певца Федора Шаляпина, выступала с ним в странах Европы до известных пианистов разных поколений XX – XXI вв., блиставших в ансамбле с признанными инструменталистами и вокалистами, представляя искусство Армении на родине и за рубежом. Среди них – Юрий Айрапетян, Светлана Навасардян, Ваге Агаронян, Роза Тандилян, Земфира Барсегян, Гаяне Ахназарян, Армине Григорян, Левон Джавадян и другие.

Саеник Магакян, дизайнер Грайр Шароян, директор издательства "Лусакн"и типографии "Геворк–Грайр" Рузанна Саакян

Особенно много места в этой главе уделено процессу формирования и развития всей музыкальной жизни в Армении, появлению и функционированию крупнейших музыкальных очагов республики. С. Магакян не ограничивает себя рассказом о великолепной плеяде мастеров прошлого или о тех, кто сейчас по тем или иным причинам несправедливо забыт, канул в Лету. Она повествует и о творческих связях армянских, русских и зарубежных исполнителей – дуэтах Леонид Коган и Самвел Алумян, Максим Венгеров и пианист, дирижер Ваагн Папян... Читая эту главу, богатую тончайшими оттенками чувства, безупречную стилистически, конечно же, не сомневаешься в профессиональных достоинствах автора, его зрелости. Книга позволяет заглянуть глубже – мы видим, что этот автор не только несет в себе богатый внутренний мир, но и обладает редким для музыканта литературным даром, живым образным языком, способностью осмысливать предмет изучения как бы со стороны, расчленить его на составляющие. Мы видим, что С. Магакян имеет свое четко формулируемое кредо, свои творческие принципы, свою ясно осознаваемую художественную вселенную.

О чем бы и о ком бы она ни писала, мы чувствуем, что за общим утверждением стоит пристальное, неравнодушное внимание к коллегам. Это особенно просматривается во второй главе, где опубликованы очерки С. Магакян и воспоминания коллег о концертмейстерах Армении, написанные ярким, сочным и живым языком. Многие из них действуют и сегодня. Биография и судьба того или иного концертмей–стера, сила души, твердость шага к намеченной цели – все это составляет живую многогранную личность мастера. С. Магакян не претендует на то, чтобы в каждом отдельном случае прочерчивать весь жизненный путь героя очерка. Здесь нет исчерпывающей и полной характеристики их творчества. Повествование носит полумемуарный характер.

Все герои очерков разные, но объединяет их активное, вдохновенное отношение к профессии, природный талант, трудолюбие, высокая профессиональная честь. Вот Арус Бабалян – одна из основоположниц Музыкальной студии Еревана, позже – одна из активнейших организаторов консерватории; Александр Акопян – первый и в определенный период единственный официальный концертмейстер музыкальной студии, а затем и консерватории, Ольга Вагенгейм, Элеонора Восканян, Евгения Хосровян, Григорий Домбаев, Нина Сагиян, Александр Долуханян, Нелли Даниель–Бек, Роза Тандилян, Ирина Костанян, Яков Заргарян, Седрак Ерканян, многогранный, незаурядный музыкант, обладающий истинным профессионализмом, выступающий в качестве солиста – пианиста и органиста Карлен Топчян, Шаке Закарян и другие...



Испытание совестью, которые выдержали герои ее очерков (в главе – 34 портрета) перед временем и людьми, – вот что еще связывает их всех. Это удивительные люди. Отблеск их судеб – на страницах этой книги. Совесть и талант были главным орудием их "производства".

Немалый интерес представляет третья глава книги, посвященная фортепианной деятельности армянских композиторов, многочисленные выступления которых, по мнению Магакян, в качестве солистов, ансамблистов и концертмейстеров стали составной частью музыкальной культуры Армении, внося в нее неповторимые черты индивидуального стиля каждого из композиторов. Приводимые в главе многочисленные высказывания из прессы помогают воссоздать атмосферу, в которой протекала деятельность композиторов–исполнителей, считает автор. И, быть может, особенно примечательно то, что при всей объективности автора и аскетической сдержанности письма мы всегда ощущаем личность Магакян – человека, безраздельно любящего музыкальное искусство и преданного ему.

Свою главную цель – оживить в душе читателя образы музыкантов–концертмейстеров, их неповторимое обаяние, особенности их исполнительского искусства – Магакян выполнила сполна. И если читатель интеллектуально войдет в концертмейстерское искусство и испытает хотя бы долю того волнения, которое испытывал тот или иной герой книги, то автор получит право думать, что шестилетний ее труд был не напрасен. А об этом свидетельствуют и многочисленные отклики тех, кто успел прочесть эту книгу. Приведем лишь две цитаты:

"Я благодарен Саеник за ее многолетний, плодотворный труд. Охвачен огромный материал, из забвения воскрешены многие замечательные имена. Удивлен и восхищен", – написал автору композитор Владилен Бальян.

"Поскорее пришлите книгу о концертмейстерах. Она будет выставлена в стендах библиотеки Санкт–Петербургской консерватории им. Н. Римского–Корсакова. У нас было немало первоклассных концертмейстеров, но я не помню ни одной обобщающей публикации об этой необходимой и столь замечательной специальности. Поздравляю", – Эра Барутчева.

Завершая рецензию, хочется еще раз подчеркнуть: прекрасной особенностью книги С. Магакян является ее горячий интерес к творчеству, стремление запечатлеть для современников и наших потомков высокие мгновения и каждодневный труд пианистов–концертмейстеров. Это очень нужно и ценно. И, увы, еще редко.

НАТАЛЬЯ ГОМЦЯН
// Голос Армении, 13.12.2018

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՎՏԱՆԳԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԼԱԳԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ.

Հարցազրույց Աշուղ Աստղանուշի (Աստղիկ Մելիքբեկյանի) հետ

Աշուղ Աստղանուշ (Աստղիկ Մելիքբեկյան)

Այսօրվա հեռուստաալիքները ողողված են մեծ մասամբ անհետաքրքիր ու անիմաստ հեռուստահաղորդումներով և անորակ նախագծերով, որոնք հիմնականում ապականում են մեր երիտասարդությանը՝ մղելով դեպի հեռավոր անդունդ: Ներկայիս հեռուստաընկերությունների ու մտավորականության մասին զրուցեցինք սիրված աշուղներից Աշուղ Աստղանուշի (Աստղիկ Մելիքբեկյանի) հետ:

- Տարիների հեռվից Ձեր անցած ճանապարհը, ինչպես կներկայացնեք այսօրը՝ որտեղից ուր ենք հասել:

Անցած ճանապարհս ընդգրկուն է, դժվարագնա: Սահմանամերձ Իջևանի շրջանում «Երգը որպես զենք» կարգախոսով եմ միշտ առաջնորդվել: Իսկ Տավուշի մարզպետարանի մշակույթի բաժնի վարիչ աշխատելու տարիներին ավելի եմ կարևորել մշակույթի ռազմավարական ու ազգապահպան դերն ու նշանակությունը՝ ազգաբնակչությանը կապելով մայր հողի հետ: Որպես անհատ կատարող՝ մասնակցել եմ և՛ հանրապետական, և՛ միջազգային փառատոնաստուգատեսների, մրցույթների՝ արժանանալով դափնեկրի, հաղթողի կոչման: Իմ բոլոր հաղթանակների տիտղոսն իմ ժողովրդի սերն է: Ճամփաս Իջևանից ինձ բերեց Երևան...Ի՞նչը փոխվեց... Ձեռնադրվել, ինձ շնորհվեց աշուղ-վարպետի կոչում, տրվեց «Աշուղ Աստղանուշ» պատվանունը (2009թ.): Իսկ 2013 թ. արժանացա «աշուղի» պատվին: Ու այս ամենի նախաձեռնողը ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանն էր: «Արամ Խաչատրյան» համերգասրահում «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլով արդեն քանի-քանի համերգ եմ ունեցել. սա ձեռքբերում է: Եվ ամենակարևորն այն է, որ ինձ ճանաչում են նաև իմ հեղինակած երգերով: Որպես անհատ կատարող Ձեռնադրվեցի ձեռնադրող աշուղի պատվին:

- Արդյո՞ք հեշտ է աշխատել ներկա պայմաններում, հատկապես այսօրվա հեռուստաընկերություններում:

- Եթե խոսքը վերաբերում է ընդհանրապես աշխատելուն, հետևյալը կասեմ. ՀՀ մշակույթի նախարարությունում աշխատել եմ՝ որպես աշխատակազմի մշակութային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ: Երբևէ խնդիր չեմ ունեցել, բայց հասկացել եմ, որ ստեղծագործող մարդը նման կառույցների աշխատանքում իր ոսկի ժամանակն է կորցնում: Հեռուստաընկերությունների հետ ընդամենը համագործակցել եմ, այն էլ՛ իրենց նախաձեռնությամբ:

- Ինչի՞ վրա է բևեռացված մեր հասարակությունը, ի՞նչ որակ է ձևավորում արվեստը:

- Այսօր ազգովի սպասում ենք Թավշյա հեղափոխությունից հետո ակնկալվող արդյունքը նախևառաջ ժողովրդի բարեկեցությանը: Ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ՝ մեր օրերում, արվեստն իր ուղղակի կամ անուղղակի ազդեցությունն է թողնում հասարակության զարգացման վրա: Մեր երկրում ընթացող ներքաղաքական իրողությունները, դեռևս չավարտված պատերազմը, Արցախի հարցը չէին կարող չդառնալ արվեստի գործերում արծարծվող թեմաներ և ուղղորդել մեր հանրությանը: Հայրենասիրական երգերի տարափը շարունակվում է: Այդ երգերը բորբոք են պահում հայ զինվորի մարտական ոգին ուղղորդելով:

- Մի հետաքրքիր դեպք պատմեք ձեր կյանքից:

- Իմ կյանքի հետաքրքիր դեպքերից մեկն եմ ուզում առանձնացնել, որ կապված է երջանկահիշատակ, մեծ երաժիշտ, քամանչահար Հրաչյա Մուրադյանի հետ... 1989 թվականի հունիս ամիսն էր: «Հայհամերգի» երաժիշտները, երգիչ-երգչուհիներով գտնվում էինք Բուլղարիայում: «Արևային ափ»ի 30-ամյակին նվիրված՝ ժողովրդական երգի միջազգային փառատոնին մեր պատվավոր ու հաղթական մասնակցությունից հետո համերգային շրջագայությունները շարունակեցինք տարբեր քաղաքներում: ...Այդ օրն էլ մայրաքաղաք Սոֆիայում էինք: Առավոտ էր: Քայլում էի կենտրոնական փողոցներից մեկով: Մեկ էլ ...աչքս ընկավ փայլփլուն, սև, տղամարդու կոշիկի, որ ամրացված էր պինդ, կանեփի թելով: Մտածեցի. «Էս պսպղան կոշիկ ունեցողը մի՞թե էդքա՞ն անճար է...»: Նայեցի տղամարդու դեմքին. ՎԱՐՊԵՏՆ էր... Նկատեց զարմացական հայացքս և իրեն հատուկ ժպիտով ու Գյումրվա հագագով ասաց, թե «Ղայդին տղեն ըսպես կէղնի».....Հրաչյա Մուրադյանի («Օրթախ»)

- Ի՞նչն է Ձեզ ամենից առավել անհանգստացնում մեր երկրում:

- Մեր երկրում ինձ ամենից շատ անհանգստացնում է կուսակցությունների միջև եղած այն անհամաձայնությունները, ներհակություններն ու անհանդուրժողականությունը, որոնք ջուր են լցնում թուրքի ջրաղացին...

- Ըստ ձեզ, ո՞րն է մեր ժամանակի ամենամեծ վտանգը:

- Մեր ժամանակի ամենամեծ վտանգը համարում եմ գերտերությունների մոլագար մրցակցությունը՝ աշխարհի վերաբաժանման համար:

- Մշակույթը ներկայացնում է տվյալ ժողովրդի դիմագիծը, կարո՞ղ ենք այսօր պարծենալ մեր մշակույթով:

- Այո՛, մշակույթը ժողովրդի դիմագիծն է, նրա էպոնիմը, քաղաքակրթության մակարդակի դրսևորումը: Մաշտոց, Կոմիտաս, Սայաթ-Նովա, Ջիվանի, Թումանյան....ունեցող ժողովրդի աշուղ դուստրն եմ ես... Պարծենալ չէի ասի, բայց հպա՞րտ եմ, որ մեր օրերի մշակութային աննախադեպ խառնարանում հայ աշուղական արվեստը զարթոնք է ապրում՝ մնալով անխառն ու շենշող, հարազատ մնալով իր ազգային հենքին ու դարավոր ավանդույթներին: «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Թովմաս Պողոսյան) այս ոլորտի մշտալույս կանթեղն է: Ջիվանու անվան աշուղական դպրոցը դարձել է Վարպետաց տուն, աշուղների սուրբ ոստան:

- Ինչպե՞ս եք տեսնում մեր երկրի ապագան:

- Այս հարցին ուզում եմ պատասխանել Թավշյա հեղափոխության օրերին (Արշակունյաց պողոտա, 22.04.2018 թ.) իմ հեղինակած «Հայ ազգի կենացը» երգի բառերով. Ո՞վ վահագնազուն մեր քաջ հայ տղերք, Մասի՞սն է նայում մեր Երթին հպարտ, Ձեր ցա՞վը տանեմ, մեր խիզա՞խ տղերք, Հզո՞ր ենք, ուժե՞ղ, հա՞յ ենք մենք անպարտ: Անառի՞կ է մեր Հայոց հին բերդը, Աստված է օրհնել մեր հզոր Երթը, Հալա՞լ վայելենք մի կտոր հացը, Խմե՞նք Հայ ազգի արդար կենացը:

- Ձեր ամենասիրելի գործընկերը հեռուստատեսության ոլորտում՝ նախկինում և հիմա:

- Իմ ամենասիրելի գործընկերը Հանրային Հեռուստատեսությունն է, որն ապահովեց 30.07.2009 թթ. Երևանի «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացած իմ ձեռնադրության համերգ-երեկոյի նկարահանումը, հեռարձակումը և տարբեր ալիքներով՝ երգերիս հանրահռչակումը:

- Դուք էլ, շատ շնորհաշատ մտավորականների նման անցաք մութ ու լույս տարիների միջով. ի՞նչ կարծիքի եք այն ժամանակների ու ներկայիս ժողովրդական երգարվեստի մասին, ի՞նչ կարծիքի եք հեռուստահաղորդումների մասին և ի՞նչ են տալիս դրանք հասարակությանը:

- Ոչ միայն մութ ու լույս տարիների միջով անցա, այլև «գրադ ու ալազանի» տակ երկու որդիներիս հետ ապրեցի իմ տանը, իմ հայրենի գյուղում, չլքեցի երկիրս, ապուպապերիս գերեզմանները... Մոմի լույսի տակ երգեցի ժողովրդիս համար՝ նրան հույս ու հավատ ներշնչելով: 1992 թ. մասնակցեցի ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպված «Անհատ կատարողների և ժողգործիքների անսամբլների հանրապետական մրցույթ-ստուգատեսին՝ գրավելով առաջին տեղը: Այդ հաղթանակն ինձ ավելի պարտավորեցրեց. այսօր էլ ինձ համար իմ Աչաջրի, Իջևանի հանդիսատեսը մնում է անփոխարինելի... 90-ականների երգը, թուրքի կրակոցներին խառնված, հույս ու հավատ էր ներշնչում, ապրեցնում էր: Այսօրվա լավն էլ այն է, որ երգաշխարհի մենիշխանությունն ասես ժամանակավրեպ երևույթ է: Միաժամանակ, ազատությունը վերածվել է նաև ամենաթողության, ով ասես երգում է մեծ բեմում. չեն գործում համապատասխան չափորոշիչներ: Հաջողված հեռուստահաղորդումներ էլ կան, մինչդեռ մեծ մասամբ այդ հաղորդումները վարում են ոչ արհեստավարժները, ասենք՝ երգիչ-երգչուհիներ...Ժարգոնը, խոսակցական լեզուն՝ օտարաբանություններով համեմված, մատուցվում է եթերից.... Հասարակությանն ի՞նչ պիտի տան նման հաղորդումները... Համացանցը մրցակից է հեռուստատեսության համար. սա պիտի ականջին օղ անեն ոլորտի պատասխանատուները:

- Ունե՞ք նպատակներ, որ չեք հասցրել իրագործել:

- Կարծում եմ՝ աշխարհում չի գտնվի մեկը, որ չիրագործած նպատակներ չունենա: Մի նպատակ ունեի, որն այլևս չեմ հասցնի, ավելի ճիշտ,... անանպատակ կլինի իրագործել: 90-ականներին աշխատում էի ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում՝ որպես բանասիրության ամբիոնի դասախոս: Մասնաճյուղը միջնորդագիր ուղարկեց մայր բուհ՝ ինձ հայցորդ ձևակերպելու: Ընդունվեց առաջարկը: Թեման էլ տվեցին՝ «XIX դարի երկրորդ կեսի հայ դորպատյան պոեզիան»: Կարճ ժամանակ աշխատեցի, բայց քանի գրիչ էի վերցնում, ե՞րգ էի գրում՝ «Իմ յարը սոխակ է», «Դե խոսի՞ր, լռա՞ծ բլբուլս»... Հիրավի, ...բլբու՞լս խոսեց... Ունեմ նաև նպատակներ, որոնք Աստծո կամոք գուցե իրագործվեն. տեսնել ծածանվող ԵՌԱԳՈՒՅՆԸ ԾՈՎԻՑ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (երա՞գ է, երազա՞նք): Մի երգ ունեմ՝ «Մասիս սարս տարազ հագավ երազում»...

Ուզում եմ. Թարթառի ձորից՝ կակաչներ բոսոր
Ու Գանձասարից՝ ղողանջ զանգերի
Բերե՞մ ու շա՞ղ տամ ծեգից մինչ կեսօր
Ու երգեմ՝ անգամ առանց հանգերի...

Նպատակ ունեմ՝ թոռներիս հարսանիք անեմ՝ զառվա՞ռ տարազը հագիս...

Նպատակ ունեմ՝ հայ քաջորդիների հարսանիքը էրգրու՞մ, այո՛, էրգրու՞մ անենք, որ սագիս ձայնից բացվեն Նեմրութ սարիս ծաղիկները, որ հայ քաջերի ու Հայաստանի սիրուհիների ուրա՞խ երգ ու պարից բացվի էրգրիս սիրտը, ցրվի Մշո դաշտի մշուշը.... Ի՞նչ ասեմ. Մակարավանքիս Խաչից թև առնեմ, Աղոթքս երգե՛մ, հղեմ առ Աստված...Մակարավանքիս:

- Ո՞րն է Ձեր խրատը կամ խորհուրդն այսօրվա երիտասարդությանը.

- Այսօր մենք ունենք հզո՞ր, բանիմաց, սկզբունքային, առաջադեմ երիտասարդություն (ես դրանում համոզվեցի հատկապես այս գարնանը. չբերեմ նոր երգ գրեմ՝ «Էս գարնան». Աշուղ Աշոտը գրել է «Էն գարնան»: Խրատ տալն այնքան էլ շնորհակալ գործ չէ, ահա թե ինչու մեր երիտասարդության հետ կուզեմ խոսել երգիս լեզվով.

Ոգու զարթոնք է մեր Հայաստանում,
Պայքարի գարուն, հոգու ծաղկազարդ,
Առյուծն է զարթնել, քունը չի՞ տանում,
Ձա՞ն հայ ջահելներ, դուք՝ մեր երկրի զարդ:
Ձա՞ն, խաղս է եղել մեր Երևանը՝
Վեհ ընդվզումով, ցասումով կրակ,
Ականջը կանչի՞. հեռու՞ է Վանը,
Չկանգնե՞ք, Հայե՞ր, մեր՞ն է Հաղթանակ:

Թուրքի հետ մեր պատերազմը դեռ չի ավարտվել: Հայ երիտասարդը նախևառաջ Ձինվոր է: Դիմում եմ հայ երիտասարդությանը. Մեր Եռագույն դրոշի տակ Երդվենք լինել զինապարտ. Հայի սերը՝ միշտ անհատակ, Հայի ոգին՝ միշտ անպարտ: Հիշե՞ք տողերս. Մենք Վահագն ենք, վահագնազուն, Հայկա զավակ, քաջ հայկազուն, Ռիթմն ու շունչն ենք Հայրենիքի, Մե՞նք ենք տերը մեր գալիքի: Աշոիդ Աստղանուշ Զարթնեցի՞ր, լա՞ռ, էլ քնել չկա՝ Հայոց Եռագույն դրոշը վկա, Գիտցի՛ր, որ կողքիդ, իր երգով անուշ, Մի՛շտ կանգնած է քո Աշուղ Աստղանուշ...

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
լրագրող,
Արցախի Հանրապետություն, Մարտակերտ,
նյութը պատրաստվել է «Երաժիշտ» ամսաթերթի համար

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՊԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Արամ Հովհաննիսյան, Սոնա Հովհաննիսյան, Ծովինար Մովսիսյան ԵՊԿ օպերային ստուդիայի դահլիճում

Փետրվարի 12-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի օպերային ստուդիայի դահլիճում ռեկտորի պաշտոնակատար Սոնա Հովհաննիսյանը, գիտության գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը և ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը հանդիպեցին բուհի ուսանողության հետ:

Հանդիպման ընթացքում կոնսերվատորիայի ղեկավարությունը ներկայացրեց նախատեսվող բարեփոխումներն ու նորամուծությունները և պատասխանեց ուսանողներին հուզող հարցերին:

Քննարկվեցին ընդհանուր կարգապահության և գնահատման կարգին վերաբերող հարցեր:

Սոնա Հովհաննիսյանը և պրոռեկտորները ներկայացրեցին իրենց նկատառումներն ուսխորհրդի կողմից ներկայացված կանոնակարգի նախագծի վերաբերյալ:

Խմբագրական
www.conservatory.am

ԹՈՄԸ
(պատմվածք)

Թոմը 17 կամ 18 տարեկան էր, երբ սկսեց նկատել, որ ամեն ինչ սկսել է փոխվել: Նախկինում նա անհոգ ու անտարբեր էր ամեն ինչի նկատմամբ:

Այս 4 կամ 5 տարվա ընթացում Թոմի վարքագիծը բավականին փոխվեց. նա դարձավ ինքնամփոփ, ամաչկոտ, միայնակ, մոլորված… Կարծում էր, որ ունի ընկերներ, բայց այդ տղաները խաբեբա դուրս եկան, խուսափում էին հանդիպել Թոմին և հիշում էին նրան միայն, երբ իրենց ֆուտբոլի խաղերում նրա կարիքն էր լինում:

Այդ տարիներին Թոմի բնակավայրն արդեն դարձել էր վտանգավոր վայր, տղան իր անհասանելի Սիրելիի և ընտանիքի հետ միշտ ապրում էր վախի մեջ: Ամբողջ ժամանակը դաշնամուրի մոտ էր՝ բոլորովին մենակ, խառնաշփոթ ու հակասական մտքերով ու զգացմունքներով, հոգեկան լարվածության մեջ՝ սպասելով անխուսափելի մահվան: Երաժշտությունը միակ աշխարհն էր, որ տալիս էր նրան համբերություն ու խաբուսիկ հույս… Բայց վախը և մահվան սպասումից առաջացած անտարբերությունը, նաև ջղայնությունը, անասելի լարվածությունը թույլ չէին տալիս նույնիսկ նորմալ դաշնամուր պարապել: Վախն ու մերժվածությունը պատել էին հոգին…

***

18 տարեկան էր, երբ ընդունվեց ճարտարապետական համալսարան իր ճարտարապետ հայրիկին հուսախաբ չանելու համար: Բայց որոշ ժամանակ անց Թոմը վերջնականապես համոզվեց, որ ինքը ընդհանրապես սեր չունի ճարտարապետության հանդեպ, եթե ավելի կոնկրետ՝ ուղղակի զզվում է այդ մասնագիտությունից: Բայց եթե անկեղծ լինենք, ավելի շուտ ատում է ոչ թե ճարտարապետությունը, այլ… դրանով զբաղվող մարդկանց միջավայրը, քանի որ մի ամբողջ տարի հաճախելով համալսարան, ոչ մի ընկեր ձեռք չէր բերել, իսկ երբ նա թողեց բուհը, ոչ ոք չմտահոգվեց, թե ուր է Թոմը, նույնիսկ Facebook-ով, որտեղ ուներ մոտ 500 «կեղծ ընկեր», չկապվեցին իր հետ:

***

Այդ տարիներին Թոմի բնակավայրն արդեն երեք կողմից շրջապատված էր, վախը և դեպրեսիան հասել էին ամենաբարձր կետին, վտանգն ամենուր էր, շուրջբոլորը...

Թոմը մինչև հիմա ցավում է, որ այդ օրը որոշեց տնից դուրս գալ: Պայծառ առավոտ էր, և արևի շողերի ներքո տեսարանը իր դաժանությամբ անսպասելի էր...

Ժամը 10-ին թե 11-ին երթուղայինի մոտ հրթիռ է ընկնում ու ուժեղ պայթյունից 11 կամ 12 դիակ փռվում են գետնին... Արյան ծովեր են հոսում, 13 տարեկան երեխան իր կտրված ձեռքն է փնտրում... Թոմը լաց լինելով տուն է վազում, բայց իր արցունքների պատճառը արդեն վախը չէր, այլ այն մեղավորության զգացումը, որ ոչնչով չկարողացավ օգնել մարդկանց: Թոմի կյանքը դարձավ մղձավանջ, երբ իմացավ, որ այդ 12-12 տարեկան երեխան տաղանդավոր ջութակահար է: Գուցե այդ երեխայի համար իր երկու ոտքերը կերցնելն ավելի հեշտ էր, քան իր երազանքները և երաժշտական հոգին թալանելը: Այդ աղետի ժամանակ Թոմի համար դժվար պահ էր, երբ պետք էր հայտնել, ար նա ամուր է և չի վախենում, որպեսզի սիրելիներին, ընկերներին և հարազատներին հույս և համբերություն տա: Փլուզումը և հանձնվելը անհնար է, կյանքը շարունակական է:

Մի քանի օր անց չի ուշանում երկրորդ դեպքը. ժամը 12.45 Թոմը պատուհանի մոտ նստած գիրք է կարդում: Հանկարծ շենքի վրա հրթիռ է ընկնում: Թոմը՝ ցնցված, թաքնվում է սեղանի տակ, ինքն իրեն հարցնելով, թե ո՞րն է այն ուժը, որ փրկեց իրեն: Աստվա՞ծ: Լավ, եթե Աստված գոյություն ունի, ապա ինչո՞ւ մեր հարևանը մահացավ: Այդ պահին շփոթված հիշում է, որ հենց այս վարկյաններին քույրը դպրոցից տուն գալու ճանապարհին է, բայց, ցավոք, ասես քարացած, տեղից չի շարժվում՝ պարզապես միշտ վախկոտ է եղել: Վարկյաններ անց Թոմի քույրը, լաց լինելով, տուն է մտնում, և... Թոմի սիրտը հանգչում է:

Մեկ կամ երկու ժամ անց Դոմի հայրը տուն է գալիս, գրկում որդուն, աղջկան և կնոջը, և բոլորը, նորածին երեխաների պես, լաց են լինում: Թոմը երբեք այդպես չէր լացել: Միակ բանը, որ անցավ այդ պահին Դոմի մտքով, սա էր. *«Այս քաղաքում ես այլևս կյանք չունեմ»:*

***

Աղետալի ներկա: Անորոշ ապագա: 20 տարեկան երեխա-երիտասարդը կատարյալ միայնության մեջ էր: Նա հասկանում էր արդեն, որ իր ամենալավ ընկերը միշտ երաժշտությունն է եղել՝ միայն ու միայն երաժշտությունը: Ապա ընտանիքի հետ և ծնողների բացարձակ աջակցությամբ որոշեց ուղևորվել Հայրենիք, որպեսզի երաժշտական կրթություն ստանա: Մեկնելուն մի քանի օր էր մնացել, բարեկամները հավաքվել էին իրենց տանը՝ նշելու եղբոր համալսարանի ավարտական վկայական ստանալու ուրախալի փաստը: Ընտանեկան տոնը պատահաբար համընկավ Թոմի համերգային ելույթի հետ, և, ստիպված լինելով թողնել խրախճանքը, նա դուրս եկավ տնից...

Եթե մնար տանը, այդ օրը Դոմի կյանքի թերևս ամենաերջանիկ օրերից լիներ, բայց հենց նույն օրը ամեն ինչ խառնվեց և մռայլվեց իր հոգում:

...Նա քայլում էր իր ճանապարհով, երբ հանկարծ հրթիռները սկսեցին երկնքից ընկնել այնպես, կարծես անձրև էր գալիս. 5-6 հրթիռ առջևում, 5-6 հրթիռ ետևում... «Առաջ



գնամ կամ ետ՝ միևնույնն է, կյանքս այլևս իմ ձեռքերում չէ»: Այդ պահին որոշեց վարվել այնպես, ինչպես միշտ էր վարվում կյանքում՝ պահ մտնել, պատսպարվել մոտակա շենքերից մեկում: Այդ վարկյանին դեռևս անգիտակցական մակարդակով ձևավորվեց մի կործանիչ, կյանքի հետ անհամատեղելի գաղափար, և այդ միտքը մինչ օրս ապրում է Դոմի մեջ, թեև ծագել է դեռ այն պահին, երբ իր ներքին հոգեբանական աշխարհը կործանված էր, հոգին ծարավ, սոված, խոշտանգված... *«Ցանկացած հարցում ընտրություն կայացնելը իմ ուժերից վեր է՝ անհնարին. սիրեմ թե չսիրեմ, պայքարեմ կամ չպայքարեմ, մարդկանց հետ շփվեմ թե չէ, ծիծաղեմ կամ լամ, ապրեմ կամ մեռնեմ, միևնույն է, ոչ մի բան հավերժ չէ»,* - մտածում էր Թոմը: Եվ որոշեց թաքնվել, և ո՛չ առաջ գնալ, ո՛չ հետ: Չէ՞ որ նա միշտ հանձնվում էր:

Անգիտակցական նյութի ազդեցությունից ազատումը անկարելի էր Թոմի համար, քանի որ նա դեռ չէր գիտակցում, ուղղակի չգիտեր, որ իր խնդիրների պատճառը վախն է և երբեք չէր փորձել այդ վիճակից ազատվել…

Այդ օրը Թոմը իր հավերժական վախով տուն վերադարձավ: Համատարած վտանգի, ոչ մի տեղ ապահովածություն չգտնելու փաստը սովորական մի բան էր դարձել: Վախը ոչ միայն սպառնալիքի կամ վտանգի սպասումից բխող ֆիզիոլոգիական փոփոխություններից. բացի դրանից Թոմը վախենում էր նաև անհաջողություններից և հոգեբանական կորուստներից: Թոմի մտերիմ ընկերների հետ հարաբերություններից արդեն սկսվել էր նրա դեպրեսիան, մտահոգությունը, հոգեկան անդորրը ալեկոծած տրամադրությունը… ընդհանրապես նվազում էր ուրախանալու իր ցանկությունն ու կարողությունը…

***

Շիրազ Այարյան

Թոմը ժամանել էր իր պապերի Հայրենիք, հեռանալով մայրիկից և հայրիկից: *«Ես հասել եմ նոր երկիր, ամեն ինչ Անհայտ է: Այստեղ ձեռք եմ բերել մի քանի նոր ընկեր: Օտարությունը և կարոտը, ուրիշ տարօրինակ զգացումներ տանջում են իմ հոգին, բայց… Սենսացիա. մամա, պապա, ես լավ եմ»:*

Թոմը պատմում է. *«Անցյալ շաբաթ օրը ես գնացի առևտրի կենտրոն, այնտեղ, երբ քայլում էի, բջջային սարքերի մոտ նկատեցի մի տխուր 11-12 տարեկան փոքր երեխա, որոշեցի մոտենալ ու հասկանալ ինչ է կատարվում: Չգիտեմ այդ պահին, երբ երեխայի արցունքները տեսա, հիշեցի ջութակահար երեխային: Պարզվեց, նրա լացի պատճառն այն էր, որ հայրը մերժում է նրա համար iPhone 7 գնել iPhone 8-ի փոխարեն: Այդ պահին, ես չգիտեմ, այդ տարօրինակ սենսացիաները, որ զգում էի, ուզում էի ծիծաղել և լացել միաժամանակ (բայց իհարկե երջանկության արցունքները չէին)»: Նույն օրը, երեկոյան, մի բան էի մտածում. գուցե այդ երեխայի մահանջը ավելի տրամաբանական է և կարելի է 900 կամ 1000 դոլլարով կարճ ժամանակով երջանկացնել այդ երեխային մինչև iPhone ընկերությունը մի քանի օր հետո նոր iPhone 9 կստեղծի: Բայց ինչպես կարող ենք այդ ջութակահար երեխային կյանքի երանգները առբերել: Մի տարօրինակ հարց ունեմ, արդյոք խելամիտ է, որ Աստված ծանձրանալու այդ աստիճանին է հասել, որ հաճույքի համար ջութակահարի ձեռքերն է խլում, ֆուտբոլիստին զրկում է ոտքերից, այրում է հազարավոր զոհերի մայրերի սրտերը: Գուցե մենք մարդիկ մեղավոր ենք այս տարիների ընթացքում ատելության ականներ ցանում էինք և հիմա ականների վրայով անցնելու ժամանակը հասել է, գուցե... Հոգեկան վնասների փոխհատուցումն անկարելի է: Արցունքների և արյան օվկիանոսների ալիքները օր առ օր բարձրանում են, նավի ուղին վտանգավոր է, որտեղ է այդ լույսի լույսը: Կարող է ես կուրացել եմ, կամ էլ արևը շատ փոքրացել է, երանի այդ արևի պիլիոն ռադիացիաներիվ մեկը ես լինեմ: Գուցե կարողանամ իմ ճառագայթով այդ օվկիանոսներից մի բաժակ գոլորշիացնել: Իմ կողքի մարդիկ ինձ թևիկներ տալիս են, բայց չեմ կարող դրանք բացել, ուզում եմ թռչել արևի ուղղությամբ»:*

***

Որոշ ժամանակ անց շրջապատի անտարբերության հետևանքով Թոմի մոտ առաջանում է մի քանի ֆիզիոլոգիական խնդիր: Արտաքին տեսքը բոլորովին փոխվել է՝ ասես ոչնչացել. միայնակ քայլում է 22 տարեկան ծերունի՝ կապույտ գլխարկի տակ թաքնված, կորված… Գլուխը լցված է այսպիսի մտքերով. *«Այստեղ օտար, այնտեղ օտար, որտե՞ղ է իմ հայրենիքը… Այնտեղ մենակ, այստեղ մենակ, ո՞վ է իմ ընկերը: Ո՞վ եմ ես»:*

…Այսօր արդեն Թոմը գտել է իր ամենահարազատ ընկերոջը, նա գտել է Հույսը և ապրում է իր Հայրենիքում, իր երաժշտության մեջ…

Նա որոշեց առաջ քայլել, չվախենալ սիրել, պայքարել, միշտ ժպտալ և ԱՊՐԵԼ…

ՇԻՐԱԶ ԱՅԱՐՅԱՆ
ԵՊԿ կոմպոզիցիայի բաժնի 2-րդ կուրսի ուսանող

ՓՈԹՈՐԿՎԱԾ ՀՈԳՈՒՍ ԵՐԳԸ

Զոյա Սարգսյան

Ուզում եմ խենթի պես մտածել ու ապրել, ուզում եմ վախենալ, ուզում եմ զայրանալ, ուզում եմ հուսահատվել: Հա, հա ուզում եմ, հենց դա եմ ուզում բառիս բուն իմաստով: Հիմա կզարմանաք, կմտածեք թե խելագարվել եմ, բայց ոչ. այս ամենը ինձ հարկավոր է բուռն կերպով ստեղծագործելու համար, և շատ է հարկավոր: Հարկավոր է, որպեսզի հոգումս փոթորիկ լինի, որպեսզի սրտիս զարկերը այնպես ուժեղ բաբախեն, որ շուրջս լսելի լինի, որպեսզի աչքերիս ծորակները բացվեն ու հոսեն, որպեսզի ստեղծագործական ժայռս ամբողջովին ժայթքի ու հեղեղի հոգիս ստեղծագործական շնչով: Ոչ, չեմ գժվել, գիտեմ, որ կարող եմ այդ նույն գործողությունները անել հանգիստ միջավայրում ու հանգիստ հոգով առանց որևէ հուսահատության, վախի, առանց որևէ հոգեկան տանջանքի: Պարզապես նստել հիասքանչ բնության գրկում, համարձակորեն նայել արևին, ապա երկար չդիմանալով նրա լույսի հզորությանը, փակել աչքերը, պահպանելով տեսած հրաշքը, նախ ինքդ ապրել դրանով, զգալ այդ ամենը ու ապրեցնել բոլոր բոլորին քո երաժշտությամբ, քո պոեզիայով, քո գեղանկարով, որպեսզի լսողը, կարդացողը, տեսնողը, նրանք բոլորը զգան այն ամենը, ինչ դու ապրել ու զգացել էիր տեսնելով այդ ամենը: Ինձ խենթացրել էր այն պահը, երբ արևի ճառագայթները ծառերի ճյուղերին, տերևներին՝ փայլ, գունագեղություն և ջերմություն հաղորդելով, նրանց միջով անցնելով հասել էին ինձ: Այս ամենը, երևի մի ակնթարթ է տևել, սակայն ես փորձում էի երկար դիմադրել ու նայել արևին, որպեսզի ամբողջովին զգամ այդ ջերմությունը, սակայն աչքերս ջրով ողողվեցին ու փակվեցին, և մի կաթիլ արցունք դուրս պրծավ ու գալարվելով արդեն տաքացած այտիս վրայով ընկավ դեղին տերևի ափի մեջ: Դրանից հետո, զգացի, թե ինչպես են այդ ջերմ ճառագայթները աստիճանաբար ընկղմվում մարմնիս մեջ ու իր ջերմությամբ պատում հոգիս, նույնիսկ զգացի, թե ինչպես են այդ ջերմ ճառագայթները թարթիչներիս ու մաշկիս միջով ներթափանցում ու տաքացնում բիբս: Սա պարզապես շշմեցնող զգացողություն է: Այո այո, այդ ամենը պետք է ստեղծագործության միջոցով հասցնել դիմացինին, կիսվել նրա հետ: Նկատեք և ապրեք բնության գեղեցկությամբ ու շնչով, այն տարեք ձեր հոգու խորքը և փայփայեք մինչև յուրաքանչյուրիդ վերջին շունչը: Ապրեք, սիրեք և ստեղծագործեք, գործի դրեք ձեր երևակայական աշխարհը և ամեն բան պատրաստ է:

ԶՈՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊԿ մեներգեցողության բաժնի 2-րդ կուրսի ուսանող

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ 27 ՏԱՐԵԿԱՆ Է

Միզոյառում Լոռու մարզի Հագվի գյուղում

Հագվիի հիմնական դպրոցի տնօրեն՝ Վաղանուշ Սահակյան, աշակերտներ՝ Միլենա Միքայելյան, Տաթև Մանթաշյան, Արթուր Մանթաշյան

4-րդ դասարանի տղաները

Փառք ու պատիվ մեր քաջ անմահ զինվորներին, ովքեր իրենց արյան գնով պաշտպանեցին և պաշտպանում են Հայրենիքը: Այդ քաջ ու անվախ հերոսներից մեկը՝ մայոր Մեխակ Մանթաշյանն է, ով օր ու գիշեր տարիներ շարունակ կյանքի և մահվան կռիվ տալով պաշտպանեց իր Հայրենիքը: Եվ այսօր Լոռու մարզի Հագվի գյուղի հիմնական դպրոցում են սովորում Մանթաշյանների տոհմը շարունակող փոքրիկները՝ Արթուրը և Տաթևը: Ինչպես ամեն տարի, այս տարի ևս Հագվիի հիմնական դպրոցը նշեց Հայոց բանակի տոնը: Տնօրեն Վաղանուշ Սահակյանը և աշխատակազմը այնպիսի միջոցառում էին կազմակերպել, որ հուզեց բոլոր ներկա գտնվողներին:

Փոքրիկ զինվորներն այնպիսի քաջաբար և եռանդով էին ցուցադրում իրենց դերերը, որ կարծես բեմին կանգնած էին ոչ թե փոքրիկ՝ այլ հասուն մարդիկ, քաջ զինվորներ, ովքեր առանց վախ զգալու, պատրաստ էին գնալ ու պայքարել հանուն հաղթանակի, հանուն մեր Հայրենիքի: Բոլոր երեխաներն իրենց մասնակցությամբ լցրել էին օրը հաղթանակի շնչով, բոլորն էլ խոսեցին և կարճ ժամանակով տեղափոխեցին անցյալ…

Սակայն ինձ շատ հուզեցին մի քանիսի խոսքերը. *«Հաղթել ենք ու եթե պետք լինի էլի կհաղթենք, կկռվենք մինչև շունչներս փչենք և ձեռքներս ազատ տարածենք մեր հաղթանակած երկրում, կպայքարենք ինչքան որ կպահանջվի արդարության համար, ինչքան որ Աստված կկամենա»* (Արթուր Մանթաշյան): Փոքրիկի արտասանությամբ այնպես քաջաբար էին հիչում տողերը, այնքան վստահ, որ անտարբեր չթողեց ոչ մեկին: Նա այս քաջությունն ու խիզախությունը ժառանգել է իր պապիկից և հայրիկից:

Իսկ փոքրիկ Տաթև Մանթաշյանը երազում է դառնալ բժշկուհի, որպեսզի բուժի զինվորներին, հետևյալ հուզիչ և խորիմաստ խոսքերով դիմեց ունկնդրին. *«Հաղթել ենք ու այս հաղթանակը կերտել են այն մարդիկ, ովքեր այսօր չկան, որովհետև պայքարել են, իրենց կյանքի գնով ճանապարհ հարթել մեզ համար»:*

Եվ վերջում փոքրիկ պարային կատարումով հանդես եկավ Միլենա Միքայելյանը և նա նույնպես ցանկություն հայտնեց իր սրտի խոսքը ասել. *«Խաղաղություն, հողին, ջրին, տիեզերքին, խաղաղություն, մեր սահմանը պահող հայ զինվորին: Փառք ու պատիվ քեզ Հայկական բանակ»:*

Ողջունենք, որ Լոռու մարզի Հագվի հիմնական դպրոցում սովորում են և դաստիարակվում այսպիսի մարտունակ և քաջ, խիզախ երեխաներ:

ԼԻԴԱ ՄԿՐՏՉՅԱՆ
Արմավիրի արվեստի պետական քոլեջի
Երաժշտության տեսության բաժնի 1-ին կուրսի ուսանող

Լաչին Ստեփանյան

ԿՅԱՆՔԻ ԽՈՀ

Աչ ջահել կյանքս ոսկի աղավնի
Թռավ միրճվեց վառ բոցերի մեջ
Երկար նայեցի անցած ճամփեքին
Վիշտը տեր դարձավ իմ հոգուն հավերժ:

Չգիտեի, որ շարժումն ահավոր
Ջահելությունն իմ իլում է տանում
Եվ մեզ բերում է ցավեր նորանոր
Միրո ակունքն է հավետ խցանում:

Պատկերն իմ ջահել ու մանկական
Ցնցում է հոգիս ու սիրտս այրում
Այն ոչ մի ճամփով չի վերադառնում
Փնտրում եմ նրան անդարձ հուշերում:

Թռավ գնաց իմ գեղեղկուհին հրեշտակ
Էլ չեմ տեսնում նրա շքեղ պատկերը հարկիս տակ
Ինձ խոցելու համար ժպտում են հեռվից
Սև աչերն անմար չքնաղ գեղուհու:

ԼԱՉԻՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հայրենական Մեծ պատերազմի
մասնակից, Հայկական բանակի պահեստի սպա՝
մայոր, ԵՊԿ փականագործ,
հեղափոխյալ՝

ՇՆՈՐՀԱՎՈՒՐՈՒՄ ԵՆՔ

ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր, կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյան

ԵՊԿ ստեղծագործության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կոմպոզիտոր, դաշնակահար, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավանեսով

ՀՀ գիտության և կրթության նախարար Արայիկ Հարությունյան, Դանիել Մելքոնյան

ՀՀ գիտության և կրթության նախարար Արայիկ Հարությունյան, Գայանե Ասլանյան

✓ Փետրվարի 12-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Ակուստիկ լաբորատորիայում տեղի ունեցավ ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր, կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյանի սեմինարը՝ «Ստեղծագործական դիմանկար» խորագրով:

Իսկ փետրվարի 21-ին կայացավ ԵՊԿ ստեղծագործության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կոմպոզիտոր, դաշնակահար, արվեսագիտության թեկնածու Արթուր Ավանեսովի սեմինարը՝ «Ռեֆերատներ և լսարանային ներկայացումներ» թեմայով:

ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր՝ Արամ Հովհաննիսյանի վկայությամբ. *«Բաց դասախոսություններն ավանդույթ կդառնան կոնսերվատորիայում: Առաջիկայում սպասվում են դասախոսություններ՝ մարտի 7-ին՝ Շուշան Հյուսնունցի (երաժշտագետ, Գերմանիա), մարտի 14-ին՝ Մարտին Ուլիխանյանի (կոմպոզիտոր), մարտի 28-ին՝ Արթուր Աքշելյանի (կոմպոզիտոր), մայիսի 3-ին՝ Լորանս Մխիթարյանի (դաշնակահար, Բելգիա), մայիսի 6-ին՝ Աննա Ռոկկիայի (երաժշտագետ, Իտալիա), մայիսի 7-ին՝ Պաոլո Ռիչչիի (կոմպոզիտոր և դիրիժոր, Իտալիա), մայիսի 8-ին՝ Ժան-Լյուկ Ֆաֆշամի (կոմպոզիտոր և դաշնակահար, Բելգիա), մայիս 10-ին՝ Արման Ղուշչյանի (կոմպոզիտոր, Ռուսաստան) մասնակցությամբ»:*

✓ ԵՊԿ 2-րդ կուրսի ուսանող, միջազգային մրցույթների դափնեկիր, շեփորահար **Դանիել Մելքոնյանը** (դոցենտ Գուրգեն Սարգսյանի դասարան) բակալավրական կրթության ծրագրով, 2018 թ. "Լավագույն ուսանող" հանրապետական մրցույթի "Մշակույթ-Սպորտ" ոլորտում՝ արժանացել է 1-ին մրցանակի, իսկ ԵՊԿ 2-րդ կուրսի ուսանողուհի, միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահարուհի **Գայանե Ասլանյանը՝** (պրոֆեսոր Վաղարշակ Հարությունյանի դասարան) մագիստրոսական կրթության ծրագրով, 2018 թ. "Լավագույն ուսանող" հանրապետական մրցույթի "Մշակույթ-Սպորտ" ոլորտում՝ 2-րդ մրցանակի:

✓ ԵՊԿ մեներգեցողության ամբիոնի 4-րդ կուրսի ուսանող **Գագիկ Վարդանյանը** Ֆրանսիսկո Վինյասի անվ. երիտասարդ օպերային երգիչների 56-րդ միջազգային մրցույթում արժանացել է Մերսեդես Վինյասի անվան հատուկ մրցանակին: Աշխարհի 57 երկրից 530 երգիչներից միայն Հայաստանը ներկայացնող մասնակիցն էր, որ 6 տարբեր արիաներով ելույթ ունեցավ մրցույթի բոլոր փուլերում: Եզրափակիչում հանդես եկավ Եվրոպայի լավագույն օպերային դահլիճներից մեկում՝ Բարսելոնայի «Լիսեու» թատրոնի բեմում, որտեղից իր ուղին է սկսել իսպանացի հայտնի օպերային երգիչ Ֆրանսիսկո Վինյասը:

ԵՊԿ մեներգեցողության ամբիոնի 4-րդ կուրսի ուսանող Գագիկ Վարդանյան

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Многократная победительница

Майя Африкян

✓ С октября по декабрь 2018 года в Санкт–Петербурге (Россия) проходил Международный открытый конкурс–фестиваль многожанрового искусства “Большая сцена”. Мероприятие проходит при информационной поддержке Министерства культуры российской федерации, комитета по культуре Санкт–Петербурга, а также других министерств и ведомств культуры и образования РФ. В фестивале номинированы специальности:вокал, хор, хореография, инструментальное исполнительство, театр, художественное слово, театр мод, оригинальный жанр, изо, фото, кино, мультипликация, другие номинации (в соответствии с заявками). Возраст участников не ограничен. Автор и исполнитель Майя Робертовна Африкян была удостоена сразу двух дипломов в номинации “Вокальное искусство. Авторская песня”: Лауреата 2–й степени за песню “Менуцюн” – музыка и слова Майи Африкян, концертмейстер Лилиана Вальтеровна Дарбинян и лауреата 3–й степени за песню “Поверим в судьбу” – музыка Майи Африкян, слова Корюна Аракеляна, концертмейстер Лилиана Дарбинян. Кстати, Лилиана Дарбинян также стала Лауреатом 2–й степени этого конкурса в номинации “Концертмейстерское искусство”.

Майя Африкян также приняла участие и стала лауреатом еще двух конкурсов, проводимых в России.

С 1 по 10 января 2019 года в Нижнем Новгороде был проведен Международный многожанровый фестиваль–конкурс сценического и художественного искусства “Ступени славы”. Участники этого конкурса, не выезжая из своего города, предоставив видеозапись конкурсного выступления имеют возможность принять участие в международном конкурсе, получить комментарии и советы от именитых членов жюри.

Организатор – Благотворительный фонд имени И.С. Тургенева; информационная поддержка – Министерство культуры Российской Федерации, Министерство культуры Нижегородской области, а также другие министерства и ведомства культуры и образования РФ.

В номинации “Вокальное искусство. Авторская песня” она стала Лауреатом 2–й степени за песню “Инч тахцот эин” (“Печальные глаза”) – музыка Майи Африкян, слова Корюна Аракеляна, концертмейстер Лилиана Дарбинян.

Со 2 по 11 января 2019 года в Пятигорске проводился Международный многожанровый конкурс–фестиваль дарований и талантов *“Stars”*. На этом конкурсе Майя Африкян была удостоена диплома Лауреата 2–й степени за песню “Молитва” – музыка Майи Африкян, слова Корюна Аракеляна, концертмейстер – Лилиана Дарбинян.

СОФА АЗНАУРЯН
композитор, редактор “Издательства ЕГК”

✓ Արմավիրի արվեստի պետական քոլեջի Երգեցողության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի՝ Տատյանա Հմայակյանը, դասախոս Համեստ Հովհաննիսյան, Չեխիայի մայրաքաղաք Պրահայում կայացած «STARS OF PRAGUE» երգչախմբային, վոկալ և գործիքային երաժշտության միջազգային մրցույթ-փառատոնում արժանացել է «Grand prix» մրցանակի:

Արմավիրի արվեստի պետական քոլեջի տնօրեն Նունե Մուրադյան, Երգեցողության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Տատյանա Հմայակյան, դասախոս Համեստ Հովհաննիսյան

✓ Մարգարիտ Սարգսյանի ստեղծագործական էությունը բացահայտվում է հանրության առջև նոր շերտերով: Այս անգամ համերգային հայտագրերում կարդում ենք հեղինակային երգի երեկո իր համախոհների ու գործընկերների՝ Նարինե Անանիկյանի, Արսեն Գևորգյանի, Դիանա Հարությունյանի Աննա Պողոսյանի, Անդրանիկ Մալխասյանի, Հրաչ Սաֆարյանի, Մանե Դագեսյանի, Վալերի Այվազյանի անունները: Սիրելի պրոֆեսորին, կոնցերտմայստերին, իր հոբելյանի առթիվ շնորհավորեցին կատարումներով և ջերմ խոսքով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

📖 В 2017 году в Киеве вышел в свет 43–й выпуск ежегодного научного журнала “Украинсков музыковедение”, основанного в 1965 году. В разделе “Достижения музыкальной науки” опубликована статья доктора искусствоведения, заслуженного деятеля культуры Армении и Польши, профессора кафедры теории музыки ЕГК Светланы Корюновны Саркисян “Музыкальный феномен в фильмах Сергея Параджанова”. В статье рассматривается взаимосвязь музыки и кино – искусств, которые на протяжении столетия продемонстрировали разнообразные скрещения на семантическом и феноменологическом уровнях, а их взаимопроникновение породило новую субстанциональную форму их существования. Анализируются фильмы С. Параджанова, которые, находясь на стыке искусств, открыли новый феномен изобразительности звучащей музыки и выразительности безмолвного кино. Акцентируется внимание на том, что перетекание свойств одного искусства в другое не ущемляет жанровую природу этих искусств, иначе говоря, кино не перестает быть кино, а музыка – музыкой. Но в результате перетекания изнутри меняется каждое из искусств, возрастает амплитуда возможных ассоциативных связей. Данное обстоятельство отражается на восприятии искусств, особенно кино, приобретающего способностъ воздействовать, минуя основной для него визуальный ряд. Такого рода кинематограф обращен к интеллектуальным, чувственным, подсознательным импульсам воспринимающего, он формирует новый тип кинозрителя. Подчеркнуто, что Сергей Параджанов вошел в историю кино как реформатор его языка, успевшего за столетие своего существования перенасытиться формальной логикой сюжетного развития. Преодолевая литературную повествовательность, он привнес в свои фильмы поэтику и логику живописи, музыки, хореографической и пантомимической пластики, тем самым обогащая кинемапгограф новыми закономерностями синтеза искусств.



Отметим, что проф. Саркисян является членом редколлегии данного издания и периодического научного журнала 📖 “Национальная музыкальная академия Украины”.

Լույս է տեսել հայ ազգային երաժշտարվեստի երախտավոր, փողային նվագարանների հանրաճանաչ վարպետ-կատարող, սրնգահար Արարատ Պետրոսյանի «Արարատյան հովեր» ժողովածուն: Այստեղ ընդգրկված են հայկական ժողովրդական երգերի՝ Ա. Պետրոսյանի կողմից տարիների ընթացքում կատարած մշակումների և փոխադրումների (սրինգի, ինչպես նաև շվիի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ) մի մասը: Ժողովածուի գլխավոր խմբագրի՝ քանոնահարուհի, լրագրող Անուշ Կիրակոսյանի խոսքերով. *«Արարատյան հովեր» ժողովածուն երկար տարիների մանկավարժական և կատարողական աշխատանքի արդյունք է: Ստեղծագործական ու կատարողական բուռն գործունեությունը կարող էր էլ ավելի արգասաբեր լինել հայկական ժողովրդական երաժշտարվեստի համար, սակայն հանկարծակի ընդհատված կյանքն իր հետևում թողեց ցանկությունների, երազանքների ու չիրականացված նպատակների մի ամբողջ շղթա: Դրանցից մեկն «Արարատյան հովեր» («Winds Ararat») վերնագիրը կրող ժողովածուն է, որ համարյա պատրաստ էր, բայց մնաց սեղանին: Սա ամենայն ջանասիրությամբ ու սիրով արված հայկական ժողովրդական երգերի մշակումների և փոխադրումների մի շարք է, որի տպագրությանն Արարատ Պետրոսյանը սպասում էր անհամբերությամբ: Քանի որ այս ժողովածուի գլխավոր խմբագրի պարտականությունը Արարատ Պետրոսյանը տողերիս հեղինակին էր վստահել, և նա լինելով անմիջական մասնակիցը ժողովածուի ստեղծման նախապատրաստական աշխատանքներին, որոշեցի անպայման ի կատար ածել տաղանդավոր երաժշտի ցանկությունը: Նույնպիսի նվիրումով ու ցանկությամբ լի այս նպատակի իրականացման ճանապարհը հարթեց նրա քույրը, մեր ազգային երգարվեստում ճանաչված երգչուհի Մարինե Պետրոսյանը, ում հետ էլ կյանքի կոչեցինք Արարատի երազանքը»:*

Ժողովածուն տպագրվել է «Վան Արյան» հրատարակչություն-տպարանում: Ռապսոդիա «Սյունիք» ստեղծագործության դաշնավորումը կատարել է Արթուր Ներսիսյանը, ձայնանիշերի համակարգչային ձևավորումը՝ Հովսեփ Թորոսյանի, կազմը ձևավորել է Վահան Կիրակոսյանը:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ, ՍՈՖԻԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս.)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 25.02. 2019:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի ԵՊԿ հրատարակչությանը (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է ԵՊԿ հրատարակչության (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք.Երևան, Սայաթ-Նովա 1ա
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yrazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/